

Պատվոյ Սեղան Վսեմ. Դեսպանին

12 Նոյեմբեր 2005
Երուսաղէմ

"Սիրելի Մանուէլ, քու նշանակումդ որպէս գլխաւոր ներկայացուցիչ ու դեսպան Պաղեստինի Իշխանութեան Մեծն Բրիտանիոյ մօտ Երբէք անակնկալ չի թուեցաւ ինձ համար, որովհետեւ արդէն աշակերտական օրերուդ դուն քու վարկովդ, վարքովդ թէ գերազանց հմտութեամբդ կը թուէիր ըլլալ խոստմնալից թեկնածու այսպիսի հանգամանքի" Թարգմանչացի տնօրէն եւ օրին Մանուէլի ուսուցիչ Պրն. Եղիա Տիգրանեան այս գնահատականով կատարեց մուտքը իր սրտի խօսքի ուղղուած Փրօֆ. Մանուէլ Յասէտեանի Պաղեստինի Իշխանութեանց ի Մեծն Բրիտանիոյ դեսպան նշանակման առթիւ, Զ.Ս.Ը.Ս. Երուսաղէմի յարկի տակ տրուած պատվոյ սեղանին:



Ս.Թ.Վ.ի Տնօրէն Պր. Եղիան իր խօսքի պահուն:

Շաբաթ, 12 Նոյեմբեր 2005ի երեկոյեան, աւելի քան 90 հրաուիրեալներ, որոնց կարգին Սաղիմահայ միութեանց վարչական ներկայացուցիչներ, Ս.Թ.Վ.ի ուսուցչական կազմի անդամներ, կուսակցական ընկերներ, բարեկամներ թէ սիրելի Մանուէլի ազգականական պարագաներ նախագահութեամբ Սրբ. Պատրիարք Յօր, Զ.Ս.Ը.Ս. Երուսաղէմի ակունքի կամարներու ներքեւ հացկերոյթով բերին իրենց գնահատականը թէ շնորհաւորութիւնները քաղաքագիտութեան փրօֆէսօր Սաղիմահայ Մանուէլ Յասէտեանի, որը ինքնին, Պաղեստինի Իշխանութեանց նախագահ Մահմուտ Ապպասի անմիջական առաջարկութեամբ նշանակուած էր լիազօր դեսպան Պաղեստինի ի Լոնտոն: Հպարտանքի արժանի իրականութիւն մը բոլորիս համար:



Ընկիի. Ժորժէ կը կատարէ Զ.Յ.Դ.ի խօսքը:

Սեղանի վերեւ նաեւ խօսք առաւ Զ.Ս.Ը.Ս. Երուսաղէմի ատենապետ եղբ. Սերոբ Սահակեան ու շնորհաւորական խօսքէ ետք յարկ տեսաւ նաեւ շնորհակալութիւն յայտնելու Պաղեստինցի ժողովուրդին թէ Իշխանութեանց, որոնք որպէս այս հողին հարազատ զաւակը, մեր տղան Զայ տղան արժանի գտած էին այդ պատասխանատու յանձնառութեան:

Եղբ. Սերոբ իր խօսքի մէջ ծանրացաւ Զայ մարդու, Իսլամ երկրի արտաքին ներկայացուցիչը ըլլալու կարելորութեան վրայ, որը իր օրին կարող է լուրջ ներդրում ունենալ նաեւ մեր հայրենիքի յատկապէս Իսլամ դրացիներու փոխ հասկացողութեան ճամբուն:

Զ.Յ.Դ. Երուսաղէմի Կոմիտէութեան անուամբ խօսք առաւ ընկիի. Ժորժէ

Աւագեան ու դրուատեց թէ թուարկեց սիրելի Մանուէլի մինչեւ օրս ստանցնած զանազան կուսակցական թէ Հայ Դատի աշխատանքային յանձնառութիւնները, որոնց մասին ներկաներու շատերը անտեղեակ էին: Ընկիի. Ժորժէի խօսքէ ետք Հ.Ս.Ը.Մ.ի վարչական ատենադպիր եւ օրուան դամատան եղբ. Յարութ Պաղամեան հանդէս եկաւ Ռուտյարտ Գիբլինկի "Եթէ" բանաստեղծական կտորով (Rudyard Kipling's "If"):



Ընկ. Դեսպանը կը փոխանց է իր շնորհակալութիւնները:

Փրօֆ. Մանուէլի մտերիմներէն Պրն. Գէորգ Հինդիլեան իրեն առաջարկուած խօսքի մէջ անդրադարձաւ յատկապէս Մանուէլի Պաղեստինեան ակադեմական աւելին քաղաքական բեմի վրայ ապահոված ձեռքբերումներուն ինչպիսիսն Օսլօյի թէ Գեմբ Տէյվիտի Իսրայէլ - Պաղեստին հաշտութեան համաձայնագրերու յատկապէս խմբագրական աշխատանքներուն, ի դէպ ընկեր Մանոն իր ակադեմական պատմութեան թէ քաղաքագիտութեան PhD. Վկայականէ անկախ, նաեւ կը տիրապետէ գերազանցօրէն Անգլերէն, Արաբերէն թէ Ֆրանսերէն լեզուներուն:

Հ.Օ.Մ.ի կողմէ ատենապետուի ընկիի. Նոյեմի Նալպանտեանի շնորհաւորական խօսքէ ետք բեմ հրաւիրուեցաւ օրուան ախոյեան ընկեր Մանօ Հասէսեանը ու շնորհակալութիւն յայտնելէ ետք բոլոր ներկաներուն, որոնք եկած էին իր ուրախութիւնը բաժնելու, յատուկ երախտագիտութեան խօսք յայտնեց Սրբ. Պատրիարք Հօր, որը իրեն տուած էր լիազօրութիւնը ըլլալու Հայոց Պատրիարքարանի բանբերը Իսրայէլ - Պաղեստին հաշտութեան գծով Երուսաղէմի բաժանման հարցերուն առնչութեամբ ընթացող բանակցութիւններուն: Ընկեր Մանոն խօստացաւ ապագային նաեւ բերել իր անսակարկ ծառայութիւնը գաղութին թէ Աթոռին ընդհանրական շահերուն:



Սրբ. Պատրիարք Հայրը կուղղէ օրուան փակման խօսքը:

Փրօֆ. Մանուէլի խօսքէ ետք բեմ հրաւիրուեցաւ Սրբ. Պատրիարք Հայրը, որը իր փակման խօսքի մէջ վեր առաւ Մանոյի շնորհքները որպէս ուսուցիչ դաստիարակ թէ տնորէն Բեթղէիմի համալսարանի վերջապէս իր շրջանակին թէ ազգին հպարտանք ներդնչող դէմք: Սրբ. Պատրիարք Հօր օրհնութեան խօսքով ու «Հայր Մեր»ով փակուեցաւ այս յիշատակելի սեղանը:



Ձախէն աջ՝ Գրգշ. Գուսան վրդ. Ալճանեան, Վսեն. Դեսպան, Ամեն. Սրբ. Պատրիարք Յայր եւ Գերշ. Արիս Եպս. Շիրվանեան



Վսեն. Դեսպանը շրջապատուած իր միութենական եւ ընտանեկան պարագաներով:



Ձախեն առաջինը Դ.Ե.Մ.ի ատենապետ Յակոբ Փանոսեան իր վարչական ընկերներու շարքին եւ ձախեն հինգերորդը Ե.Դ.Մ.ի ատենապետ Նազարէք Պէնլեան:

Յաւելեալ նկարներ Անգլերէն բաժնին մէջ: